

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան ֆր. 10

վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻՆ

20

ՍԱՆԴԻՄ



ՅԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտատպան

Տարեկան ֆրանք 12

վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻՆ

20

ՍԱՆԴԻՄ

## ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հաքաք օրերը: Ծա-  
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու քիւ ա-  
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիմ:  
Հրատարակուած գրութիւնը եւ չսրմիւր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

## ԱԶԳԱՅԻՆ

—0—

### ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Այս առաւօտ Կ. Պոլսոյ մեր մաս-  
նաւոր թղթակցէն առնուած նամակի մը  
նայելով, երաշխաւորութեամբ ազատ  
կը ձգուին եղբեր Պուլկարիանէն վերա-  
դարձող այն գաղթականները միայն,  
որոնց գաղթավայրին մէջ ունեցած յա-  
րաբերութիւններն ու վարած կեանքը  
կասկած ներշնչած չեն:

Երկու շաբաթուան մէջ Վառնայէն  
Պոլիս վերադարձող երկսեռ հայ գաղ-  
թականաց թիւն է, Պուլկարական շո-  
գենաւով 98, Ռուսականով՝ 110, դար-  
ձեալ Պուլկարականով՝ 254, ընդամենը  
462 հոգի:

Թիւ 2942

Մարտ 11 Վառնա

Առ Պատուարժան Թաղ. Խորհուրդ:

Ներկայիս կը հաղորդեմ Պատ. Խոր-  
հրդոյդ, որ 2942 թիւին համաձայն, շո-

գենաւային ընկերութեան Պրն. Տնօրէ-  
նին գրուած է որ այսօրու ընէ սկսեալ  
Կ. Պոլիս վերադառնալ ուղող գաղթա-  
կան հայերերը կէս տոմսակով փոխադ-  
րուին, որոնք ի ձեռին պէտք է ունե-  
նան խորհրդոյդ կողմէ տրուած վկայա-  
գիր մը:

Նախագահ: ԺԷՔՈՎ.

Քարտուղար: ԲԷԹՐԱՆՈՎ.

Պարկաստանէն արժանահաւատ  
անձէ մը մասնաւորի մը զրկուած նա-  
մակէն կը տեղեկանանք թէ, հոն բա-  
ւական թուով հայ յեղափոխականներ  
ձերբակալուելով, թուրք կառավարու-  
թեան յանձնուեր են:

Կ. Պոլսոյ մէջ տպագրական տառեր  
պատրաստող բոլոր ձուլարանները և երկ-  
րորդական տպարանները դոցեւո հրա-  
ման մը տրուեր է:

(Սկիզբն բարենորոգման և յառաջ-  
դիմութեան):

Տեղւոյս թաղական Խորհուրդը իր մէկ պաշտօնադրով գոհունակութիւն կը յայտնէ Տեարց Մ. Գապատայեան. Կ. Կէմիճեան և Փ. Կ. Հալաճեան տեղացի ազնուամիտ երիտասարդներուն, որոնց ջանքովը Վարդանանց տօնի գիշերը ի նպաստ Սիսակեան երկսեռ վարժարանաց տրուած թատերական երեկոյթի զուտ հասոյթ 317, 35 արծաթ լէվը ամբողջովին ստացած ըլլալով, յանձնած է զայն վարժարանաց Հոգաբարձութեան:

Կը լսենք թէ կաթողիկոսութիւնն ընդունող քէո Կարապետ, որ այժմ կը գտնուի ի Ռուսնոց, մէկ քանիններու դիմեր է նորէն Հայաստանեայց եկեղեցւոյ գիւղեր մտնելու համար:

Ըստ մեզ, այդ մարդուն տրուելիք պատասխանը սա պէտք է ըլլայ. «Բարի եկար. ոչ ճանաչեմք զքեզ»:

Ֆիլիպէէն մեզ կը գրեն.

«Այստեղ մեծ խռովութիւններ կը պատրաստուին, իբր հետեանք Վարդանանցի օրուան եղած անհաճոյ դէպքին:

«Նոյն օրուան պատահած խռովութեանց իբր թելադրիչ նկատուած է տեղւոյս ալեղարդ Տ. Արիստակէս քահանան. տէր հայրը իբրեւ թէ այն օրը անիծեր է եղեր խռովութիւնը հանող պարօնը: Յիշեալ քահանան անստորագիր և սպառնալից նամակ մը ստացած է, որպէս զի այլ ևս չի համարձակի պատարագել: Աստանդաշըիկ վարդապետն ալ, կիրակի օրը, եկեղեցիին բեմէն մատնանիչ կընէ տէր հայրը, ըսելով թէ «Ես հիւր մարդ մըն եմ, (\*) ի՞նչ կարող

էի ընել, յանցանքը անորն է որ գրեւած է», ասոր վրայ տէր հայրը փիլոնը կը ծալլէ ու եկեղեցիէն դուրս կենէ:

«Հիմա խռովութիւնը աւելի սուր կերպարանք մը առած է, որովհետեւ Պուրկազի տէր Սահակ քահանան հոս գալով, ինքնակոչ վարդապետին հետ միացած, կաշխատի ժողովուրդը տէր Արիստակէս քահանայէն պաղեցնել տալ, որպէս զի ինքը անոր տեղը անցնի»:

Հայելի — Ո՛վ վարդապետներ և տէր պապաներ, մինչև երբ, մինչև երբ ձեր փառքին ու կիրքին խտրալիք պիտի ըլլայ այս ժողովուրդը:

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Խորհուրդս կը փութայ ծանօթութիւն տալ բաղաքիս Հայ գաղթականաց թէ վերջին փոստով Ազգ. Պատրիարքարանէ ստացած է մի Պաշտօնագիր ըստ որում Հայ գաղթականաց ի Պոլիս վերադարձն կ'արտօնուի Օսմանեան կառավարութեան կողմանէ, մասնաւոր պայմաններու ներքեւ և ինչ ինչ ձեւակերպութեամբ, այս մասին խորհուրդս պատրաստած է ամէն ժամանակ իրեն դիմում ընողներուն պէտք եղած բացատրութիւններ տալ որպէս զի որ և է գոհարութեանց չ'բաղխին:

Վառնա 13 Մարտ 1898

Ի Դիմաց Թաշ. Խորհրդոյ

Վ. Ատենագրարի Ատենագետ  
Մ. Սիւքիասեան Մ. Տ. Մինասեան

#### ԱԻԵՏԻՍ ՄԸ

Կը լսենք թէ Պուրկազիոյ հայաբնակ բաղաքներէ մէկուն մէջ բարեհամբաւ ուսուցիչ մը իր օգտաշատ զառախօսու-

(\*) Բոժոժիկ — Հիւր եմ կըսես ամա, գացած տեղդ ամիսներով միևնոյն կը բռնես կը նստիս կոր, ու հանգարտ ալ չես նստիր կոր:

Թեանց շարքին մէջ կեցադրութեան վրայ եւ ընդարձակ տեղեկութիւններ տուած ըլլալով աշակերտաց, դպրոցին ուսուցչուհիներէն մէկուն եւ այդ դասախօսութիւններէն բաժին մը հանելու համար յիշատակեալ գծին վրայ դաս մը տուեր է անոր, որուն արդիւնքը սա եղած է որ ուսուցչուհին պարտաւորուեր է առնել քայլեր:

Յաւալի է տեսնել որ մերազգային վարժարանները, (քիչ բացառութեամբ) կարգ մը բանդիտեմէի շարլաթաններու ձեռքը յանձնուած են, ուր յաճախող հայմանկտիք իրենց դաստիարակներուն պէս հոսհոսներ ըլլալու կանուխէն կը վարժուին:

Արդեօք Արիմեւէքեան քո՞ւն կը քոչեն այդ կարգ մը վարժարանաց հոգարարձութիւնները:

«Վէսէլօ» հայ թատիրախումբը այս գիշեր վերջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ Լուքրէցիա Պորճիա անուն թատրերդութիւնը, ինչպէս նաեւ Լէպլէպիճի Հօրհօր օրէնք գօմիդէն մէկ քանի մասեր: Սոյն ներկայացումը պիտի տրուի ի նպատակ Սիսակետն երկսեռ վարժարանաց եւ Վէսէլօ խումբը վաղը պիտի մեկնի ի Ֆիլիպէ:

#### ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԵԼԻ

#### ՎԱՐԴԻՆ ՈՒ ԱՍՏՂԵՐ

Ձմրան մէջ էր . փափաքեցայ  
դանել վարդ մը խնկաւէտ,  
'ւ ահա շուրթդ ինծի ընծայ  
Տուաւ հատ մը թարմ յաւէտ:

Մուծ գիշեր մ'էր, իղձ մը յիմար  
Ըսաւ. աստղեր փափագէ՛

Եւ աչքերդ՝ ջինջ, մշտաժառ  
Բոյլեր դարձան կըրակէ:

Այս աշխարհն էր ինծի համար  
Անպատ մը անծայրածիր,  
Երբ բեզ գտայ, դուն անհամար  
Աշխարհներ ինձ շնորհեցիր:

Ոհ, առ յաւէտ իմին սիրոյս  
Մընաս յառած անկորոյս . . .  
Զի թէ մեկնիս, քեզ հետ մեկնին  
Վարդն ու աստղեր իմ կեանքին:

ՕՄԻՐԻ

Վարժարանի մը ա՛լա բարիսիէն  
անօրէնի մասին պատահական թըղ-  
թակցի մը գրած նամակը յաջորդ թեր-  
թով պիտի հրատարակենք:

Յաջորդ 50րդ թիւով ՀԱՅԵԼԻ իր Ա.  
տարին կ'ամբողջացնէ . մինչև ցարդ Ա.  
տարւոյ բաժնեգինը չի վճարող մէկ քա-  
նիններուն ըստ օրինի թերթ չպիտի  
զրկենք, մինակ Մայր — տուժարին մէջ  
անոնց անուններուն առջև ձրխանաւակ  
պատուանունը պիտի աւելցնենք:

Ով որ 51րդ թերթը ետ չի դար-  
ձունէ, բաժանորդ կը համարուի, եւ  
ով որ Ա. տարւոյ մէջ ընող մէկ քանի-  
ներու պէս չորս, հինգ, երեքսն տասը  
թերթ առնելէ ետքը մինակ վերջինը  
ետ կը դարձունէ առանց կաշդացած-  
ներուն փոխարէնը վճարելու, յականէ  
անուանէ ի ցոյց պիտի դրուի ՀԱՅԵԼԻ  
միջոցաւ: Մեր պայմանը այս է: Մենք  
ուրիշ թերթերու պէս ընթերցողաց դը-  
լուխը չենք ուզեր ցաւցնել գրամ գան-  
ձելու համար երկու օրը անգամ մ'մէկ  
երկու լեզուէ երկար բարակ ազդեր հը-  
րատարակելով:

## ՍԵՐԸ ՍԻՐՈՎ ԲԺՇԿԵԼ

Գարբիէլ խենդի պէս սիրահարած էր իր բժիշկին: Թէեւ իրօրութիւնը հազուադէպ է, այլ կրնայ սփորական դառնալ, բանի որ կանայք արանց հետ կը մըցին այնպիսի արուեստներու մէջ, որք ցարդ զօրաւոր սեռին վերապահուած կը թուէին, զի Գարբիէլի բժիշկը իւր գրացուհին էր, բայց ութամեայ, թիւահեր, սիրուն կին մը, յորմէ գիտութիւնը չէր կորցած իւր կնային հըրապոյրներէ ոչ մին:

Կան մարդիկ, որ սիրուն կիներ կամ աղջիկներ տեսնելու պատրուակ ունենալու համար կը յաճախեն այնպիսի վաճառատուններ, ուր վաճառողք գեղեցիկ սեռէ են, եւ իրենց տուններուն մէջ ձեռնոցներու, փոշիներու (քոշուր) անուշահոտութեանց, (գօգմէթիք) ներու բլուրներ կը կուտակեն: Գարբիէլ ալ իւր բժիշկին այցեգին տալով սնանկութեան ճամբան բռնած էր: Անհաւատարի բան էր թէ ի՞նչպէս կը գիտնար այնքան հիւանդութեանց. տենդ, ցնցղատապ, յօգացաւ, ստամոքսի ցաւեր, ո՛ր մէկը թրւենք, ամենքն ալ առանց շունչ առնելու իրարու կը յաջորդէին: Մինչեւ իսկ օր մը պնդեց թէ թոքերէն մին ախտաւորուած էր, բժիշկին ականջը սրտին վրայ դնել տալու համար:

Սիրուն տօթթօրուհին իւր փափուկ մատներովն ծանր ծանր քրքի քրքի զարկաւ կարծեցեալ հիւանդին կուրծքին եւ կոնակին, յետոյ իւր փափուկ եւ վարդափոյն ականջն դրաւ նոյն տեղերուն վրայ, որք բարակ կը տաւով մը ծածկուած էին: Ապա ծիծաղը զըսպելով, յայտարարեց թէ՝ «Թոքը բնաւ բան մը չունէր»:

— Սխալած եմ, ցաւին տեղը հոս չէ, ըսաւ Գարբիէլ, հիմա գտայ զայն, ձեռքդ վրաս դնելէդ ետքը, հոս կը ցաւի, — յաբեց, ձեռքը սրտին վրայ դնելով:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ տօթթօրուհին, նո-

րէն չ'սկսինք, արդէն սրտիդ հիւանդութեան վրայ խօսած էք ինձ. ձանձրացուցի՛ք զիս. . . գիտցէք, սիրելի Գարբիէլ, թէ ճշմարիտ հիւանդներ ունիմ խնամելու. դուք ժամանակս վատնել կուղէք. . . ձեզ զբօսանք պէտք է, շատ զբօսանք, եւ պիտի տեսնէք թէ ձեր սրտին ցաւիկը շուտ մը պիտի անցնի:

Ահա այս կերպով դեռատի կինը կը մերժէր հէք սիրահարը, ամեն անգամ որ քիչ մը չափը անցունէր:

Բայց Գարբիէլի սրտին ցաւիկը փոխանակ բուժուելու, հետզհետէ կը սաստկանար: Նորէն կանչեց բժիշկը, սպասաւորին բերնով ըսել տալով թէ՝ «շատ գէշ էր»:

Տօթթօրուհին գալով, գտաւ սուտ հիւանդը ցայգաղգեստի մը մէջ փաթուած եւ թիկնաթուռի մը վրայ տարածուած:

— Տեսնե՛նք, տեսնե՛նք, ի՞նչ ունիք նորէն, հարցուց անհամբեր դէմքով:

— Օգին մէջ ելեքտրականութիւն կայ, ըսաւ Գարբիէլ մտովի, յետոյ ցաւագին ձայնով մը գոչեց, չէ՞ք տեսներ, տիկին, թէ ամեն օր մէյմէկ քիչ ծանր ծանր կը մեղմանի:

— Եւ ո՞վ է գբեղ այդ կերպով մեղմելու ստիպողը:

— Ո՞վ է զիս ստիպողը. . . հը՛. . . բայց դո՛ւք էք, դէ՛ք, զոր բոլոր հոգեւոր կը սիրեմ:

— Օ՛հ, արդարեւ շատ հիւանդ էք, ըսաւ տօթթօրուհին, բայց հիւանդութիւննիդ անբուժելի չէ: Ի՞նչ կրնամ տալ որ բժշկուիք:

— Թողէք որ ես ըսեմ եւ դուք գրեցէք դեղագիրը, զի երբեմն հիւանդը բժշկէն աւելի լաւ գիտէ իրեն պէտք եղածը: Ես՝ ձեզմով. . .

— Ձեզ պէտք եղածն եմ եմ. . . ըսաւ տօթթօրուհին խնդալով, բայց եթէ բժիշկ մ'եմ, բուժիչ դեղ մը չեմ. . . ի՞նչ կրնէ ամուսինս, եթէ դեղագրերուս մէջ զովացուցիչ բուսածոյնի տեղ անձս գրեմ:

— Չմեզ իրարմէ բաժնող բանին վրայ չ'խօսինք, ըսաւ Գարբիէլ, այլ մօտեցնող բանին վրայ:

— Լաւ, հիւանդութեանդ վրայ խօսինք, ըստ բժշկուհին, և թեւաթու մը աւած՝ անվեհեր դէմքով Գաբրիէլի դիմացը նստաւ: Ըստ որում՝ երիտասարդն իր հիւանդի դիմքը փոխած էր, տօթթօրուհին ստիպեց զայն որ թիկնաթուին վրայ տարածուի: Ցայգազգեստին ծալքերը վրայ բերաւ և և յետոյ կէս հեղանկան և կէս լուրջ լիզուաւ մը յարեց: — Այդ վիճակին մէջ շատ խնամք հարկաւոր է ձեզ. այնպիսի հիւանդութիւն մ'ունիք, որ ընդհանրապէս ձեր տարիքն ունեցող մարդոց վրայ կը տիրէ: Ոմանք մինչև աստիճան մը նկարագրի բարձրութիւն ունենալով, իրենք իրենց կը բժշկուին, այլք գոհձիկ ընութիւն ունենալով, աւելի տեղի կուտան հիւանդութեան. այս վերջինք երբեք չեն խորհած սա առածին վրայ. «Երջանկութիւն գտնել կարծելով իւր կրից անձնատուր լինելը կը նմանի հեղեղի մը մէջ նետուելուն, բազմիքի մը հաճոյքը գտնելու յուսով. այնպիսիք անսխալ հաճոյքը միայն կը տեսնեն, առանց տեսնել տեսնելն եկող հոգեբուականը տեսնելու. այս կարգի մարդոց համար ամուսնացեալ կին մը նախանձելի որս մ'է: Այն աղջիկներն, որք սերն աւհաստ մը դարձուցած են, շատ սուղի կը նստին. ուրիշի մը կինը ծախք մը չառնել, և ասկէց զատ, պատասխանատուութիւն ալ չկայ, վասն զի անհարազատ որդի ալ չգոյանար ամուսնութեան մէջ:

— Ո՛հ, տիկին, գոչեց Գաբրիէլ փոխառ փոխ կարծելով և կեղծելով, այդպիսի հաշիւներ ընող մարդ մը կը կարծէր զիս:

— Ներեցէք, մի՛ ընդմիջէք, դուք զիս խորհրդակցութեան կոչեցիք. ձեր վերքը կը զննեմ. . . զգայնութիւններդ բարեգուշակ է, բայց ֆիզիքական վերքեր միայն զննելու սովորութիւն ունենալով, թերեւս ձեռքս քիչ մը ծանր իջաւ բարոյական վերքի մը վրայ. սակայն որչափ ալ ծանր լինի, դարձեալ ամուսնոյս ձեռքէն թեթեւ է. եթէ երբեք այս գործողութիւնն անոր յանձնէի. . .

— Չեմ գիտեր, ըստ Գաբրիէլ, բայց պիտի նախընտրէի. . .

— Ցաւցուցի զձեզ, ընդմիջեց տօթթօրուհին, բայց դուք որ կառաջարկէք ինձ ամուսնոյ մը նուիրական պարտքերը մատնել, կը կարծէք թէ զիս չի վիրաւորեցիք: Օն անդր, թողէք որ պատեմ այդ վերքը, զոր ակամայ պատճառեցի, և քիչ մը օգնեցէք ինձ:

Բայց Գաբրիէլ յամառ հիւանդ մ'էր, տեսնելով որ դեռատի կինն իւր նպատակէն կը խոտորեցնէր խօսակցութեն, սեղեց մէկէն ի մէկ առաջադրած ճամբուն մէջ վերադարձնել զայն: Ինչ որ սէրը կրնար գուրս ժայթքեցնել սաստիկ սիրահարեալ սրտէ մը, զայն բոցավառ լեզուաւ մը յանձնեց. իւր պերճախօսութիւնը մեղրի պէս կը ծորէր շրթներէն, մանաւանդ որ տիկին Առաքինեան անշարժ և անբարբառ, աչքը կիսափակ, կարծես մտիկ կընէր երկիւղածօրէն:

Սակայն հարկ էր եղբակոցութեան մը յանգիլ. Գաբրիէլ անոր ձեռքերը բռնեց, բայց տօթթօրուհին գլուխը վեր առաւ, ձեռքերը բաշեց և ըսաւ. — Լնցուցիք, ո՛հ, շատ լաւ. եթէ բոլոր հիւանդներն ալ այսպէս բացայայտ խօսին, բժիշկն շատ դիւրաւ պիտի գուշակէր խտերը:

Գաբրիէլ վհատեալ՝ ինկաւ իւր աթոռին վրայ:

— Ցաւը սաստիկ է, կրկնեց տիկին Առաքինեան անողորմաբար, և բժշկութիւնը վրաս չեմ առնուր, մինչև որ կրաւորապէս ինձ հնազանդելու բացորոշ խոստում չտաք: Երիտասարդը յուսահատական շարժում մ'ըրաւ:

— Ամենէն արագ, ապահով և գըլխաւոր դարմանն է ամուսնութիւնն:

— Ամուսնանամ, գոչեց Գաբրիէլ, երբ սիրտս ձեզմով լի է:

(Շար.)

### ԴԱՆԻԿ ԱՂԱՍԻՐ

Երկուշաբթի օրը Անցիլին մէկը, կէս գինով վիճակի մէջ, խմբագրատուն մը կը մտնէ:

— Բարեւ աղա պէկ.

— Աստուծոյ բարին :

— Ղազէթաճի էֆէնտին ըստանքնիդ էք :

— Այո՛, ի՞նչ կայ որ . . .

— Էֆէնտըմ՝ տիւնս է բայվեր ու օճախս է մարեր . էոջի օր քաղքէն դիր մի առանք , առ գիրին մուծիպ , մեր պայվական հարսան , կողակիցս , շուպաթի շերիֆի տասն նըվութնին թերբի տաղտաղայի տիւնեա տրեր է :

— Դլուխնիդ ողջ կենայ , Աստուած ձեզի շատ օրեր սայ :

— Աւախտէ «Տէր ետ եւ տէր էառ» կըսէ Դաւիթ իսէ թը՝ քերէմ՝ ու հիմմէթ անէիք , իւրիւնսմէնուդ վասէթայովը իլան մի անէիք ուր՝ Կօրեկենց Դանիկ աղբօր կընիկը թէսլիմի ըսէ՛ արեր է :

— Կընա՞նք իմանալ թէ ի՞նչ միտքով կ'ուզէք այդ բանը ընել տալ :

— Էֆէնտըմ՝ կարճխօրթիք. մալիւմ՝ ա՛, Դրօշակէ զազէթային մէջ Շարաֆ պէկը մեռեր է ըսին ու օրթալընը վէլվէլէի մի տուան , անձախ՝ տակը դարտակ էլաւ :


— Լաւ :

— Անցածներս ալ եինէ ան զազէթային վասէթայովը Մուսա պէկը թախլան նետեր է ըսին , մէկէր իսէ հերիֆը պայիր թուրքի պէս էլէկվմ պերհայաթ է եղեր :

— Շատ աղէկ :

— Պինաէն ալէյհ , իմ աս էսէֆէնկիդ քէտէրիս ալ իւրիւնսմէիդ մէջ գրել ուղելու մէֆուժը սա է ուր , մատէմքի տա մախլիքները ասօրուան գրածնին վաղը սաւտ կուհանին , աս հիսապով կնկանս էօլիւմն ալ իւլան ըլլի իսէ , մինպահաթ ան ալ սուտ տի ելնէ :

Խմբագրապետը չկրնալով ինքզինքը բռնել , քա՛հ , քա՛հ մը կը ձգէ , Ակնցին քալ «Ծառայ եիմ կըզըոցուցեր աղախ» ըսելով կ'առնէ կը բալէ :



## Ա Ի Լ Ո Ւ Բ

Անցած օր բոժոժիկ բեռնակիր մը առջեւ ձգած , — որուն շալկած կողովէն դուրս մէկ քանի մարդոց գլուխները կ'երևային — Մուսալլաի ճամբէն կ'անցներ :

— Ի՞նչ է ան բոժոժիկ , կը հարցնէ ծանօթ մը , այդ կողովին մէջի 3-4 մարդիկը որո՞նք են :

— Դուն երեք չորսը գիտես , աս երրորդ անգամն է որ կողովը կը լեցնենք կը տանինք կը պարպենք կոր :

— Ի՞նչ կըսես . բայց որո՞նք են տառնք :

— Ես ըսեմ , դուն համրէ : Ասոնց մէջ կան «առանց մէկու մը խորհուրդ հարցնելու արբշուութեամբ զենքի պլլուիլ» քարոզող մեծամարտիկ պարոններ :

— Մէկ .

— Շաբաթ օրերը «Հայեղի» ձրիաբար կարդալու համար անոր բաժանորդներուն մաղաղաները եօխամաի ելլող քերէտաղի խանութպաններ :

— Երկու .

— Բառուրսիւն թեկն վրայ , հովանոցն ալ ձեռքը , կնիկ աեյիւր ընելու համար Եկեղեցիին պահարանին դռնէն Այլէրի պէս վար կախուած միւսիւններ :

— Երեք .

— Սրճարաններու սեղաններուն վրայէն նոր ըրագրները վերցնող ու տեղը հիները ձգող ազնիւ պարոններ :

— Չորս .

— Ոտքին հին լաստիկները այցելութեան գացած տունը ձգելով՝ նորերը թոցընող պարկերչտ միւսիւններ :

— Հինգ .

— Տարեգլխուն՝ բաղդը փորձելու պատ-

բուսկաւ իր ընկերէն քանի մը ֆրանք փոխառութիւն ընելով՝ մինչեւ հիմա չի տուել մեծարելի եռութիւններ:

— Վեց.

— Կան նաև պատուելի անձնաւորութիւններ, որոնք երբ բարեկամի մը կողմէ ճաշարան հրաւիրուին, «միւֆթ օլտունտա զիֆթ օլտուն» ըսելով՝ կերակուրներու թէնձիրէները կը պարպեն:

— Եօթը.

— Կը գտնուին բարենպաստակ հաստատութեան մը ի նպաստ տրուած երեկոյթի մը հասոյթէն 20-30 ֆրանք շորթող յարգելի առաւփսեաներ:

— Ութը.

— Վառնաի գաղթականներուն զրկուած կարասիները ու 100 ոսկիի մօտ գումար մը կոկորդը անցունող էմիյէթլի լաշիխարեսա էմանէթճիներ:

— Ինը.

— «Պարահանդէս պիտի երթամ, մէկ գիշերուան համար սե գօստիւմդ ինծի տուր» ըսելով ընկերոջը հագուստը մինչեւ հիմա կըռնակէն չի հանող օրինակելի աւաղակներ:

— Տասը.

— Գաղթական աղքատ բայց գեղանի կնոջ մը մարդասիրաբար (°)՝ ֆրանք տուող ու գիշերը անոր տունը երթալով «պու շիշմանլըղընլա նասըլ եարաճաղըղ» ըսելով՝ անոր սիրտը գողնալ աշխատելուն իբր վարձատրութիւն՝ էրկնէն համով հոտով պաստօն պրծօլասի մը ուտող մեծապատիւ աղաներ:

— Տասնմէկ.

— Հաճի Բաստիայի գինետանը մէջ, «չալը իսթէրիմ, բարա եէյէճէիմ» պոռալ կանչելէ ետքը ձեռքերնուն թէֆէրը իրարու գլխու վրայ չափող պաշկերտասուն ե գինեմօլ չալըճիուհիներ:

— Տասներկու.

— Անցած կիրակի սիրուհիին Պոլիս մեկնելուն առթիւ սրտին ցաւէն գինետուն վազելով լաւ մը արքենալէ ետքը՝ նաւամտոյցի սրճարանին սեղաններէն մէկուն առջև նստած գոնչաձայն լացող սիրահարներ:

— Տասներեք.

— Է՛յ, տահա համրե՞մ, տուղինան անցաւ, զիս ճամբէս մի՛ ձգեր.

— Շնորհակալ եմ տուած տեղեկութիւններէդ պարոն Բոթոփիկ. միայն սա կ'ուզեմ դիտնալ թէ հիմա ասոնք ո՞ր կը տանիս կոր:

— Ո՞ր պիտի տանիմ, վառնաին ծովը թափել կուտամ կոր:

— Ծովը մի՛.

— Հապա ի՞նչ գիտցար, միջավայրի այս աւլուքներն ալ ծովը թափելու ենք որ հրապարակը մաքրուի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԱԿԱՆ ԴԷՊՅԵՐ

Ա.

ՓԻԼԻԿ ԱՂԲՈՐ ՀԱՐՍՆԻՔԸ

Բ.

ԹԱՊԼԱՔԵԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Գ.

ԱԿՆՑԻՆ

Ընթերցասէրներու փափագին համաձայն սոյն երեք ծիծաղաշարժ դէպքերու հաւաքածոն, որ աւելի քան 200 էջերէ պիտի բաշկանայ, արդէն մամլոյ յանձնուած ըլլալով, բաժանորդագրութիւն մը բացուած է: Դիմէ 1½ ֆրանք: Հրատարակութիւնը ամբողջաճախէ ետքը պիտի վաճառի 2 ֆրանքի:

Այս առթիւ շրջաբերութեան հանուած բաժնետոմսը յառաջիկայ Մայիս 1 ին Վառնաի մէջ «Հայելի» իւրմբադրութեան, իսկ գաւառները անոր Պատ գործակալներուն ներկայացնողը պիտի ստանայ սոյն դրքէն մէկ օրինակ, կազմեալ:

## ՀԱՅԵԼԻԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պոլիսի, Թիֆլիսի եւ Վիէննայի մէջ հրատարակուած հայերէն դպրոցական եւ պատմական գիրքեր, գնումն եւ վաճառումն ամեն տեսակ նամակադրոշմերու. նաեւ դպրոցական պիտոյքներ: Գաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին

9



ԳԿԻՇԱԿ

Ա. Պ. Ս. Գ. Ս. Յ. Ի.

կամ Զուարճալի Բաղդադոյց Ընտանեկան

Երկուսն ամէն հասակի ընթերցողաց զբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով, գիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴՍՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական զուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ երախայնորուն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը երօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտրի է, տպագրութիւնը՝ մոլոր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՍՍՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,

Ձրդ. Թաղ, Թի- 1104:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. է կը տպագրուի եւ մօր տոփին մէջ կը գտնուի Այցետունի գործնածութեան հրահանգը պարունակող տէտրածը, որուն կողքին վրայ այցետունին տիրոջ անունը տպագրուած պիտի ըլլայ: Գիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմ-յաւճնարարողին վրայ է: Գրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակագրոշմ կ'ընդունուի: Կանխիկ:

ԷՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԿԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըլ կէճէլէրինէ մախսուս ղայէթ կիւ-իւնճլի վէ էյլէնճէլի իշպուս զօմէտի 32 սահիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-նիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարապ Վարնատա թիւթիւնճիւ տիւքքեանլարլընտա 30 սանթիմ ֆիաթլէ սաթըլմագտա սըր: Թաշրալարտան իսթէյէնլէր կալընըզ 30 սանթիմլիք բօսթա բուլը ղիրտէ մուհարրէր նամըմա կէօնտէր-մէլի տիրէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 նճի Ուչասթ, 1104  
Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պուռնտան պէօյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-խտէլի զօմէտիլէր տախի բէյտէրէյ նէշր օ-լունաճաղը պէյան օլունըր:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаймность“—Варна.